№ 6 Յունվարի 17 Երեքշաբթի 1884 Յունվարի 17 Երեքշաբթի № 6

ՏԱՍՆ ԵՒ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ».

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ „ՄՇԱԿ“

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻՐ

(ՏԱՍՆ ԵՒ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ)

ՆԵՐԿԱՅ **1884** ԹՎԻՆ

ԿՂ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ՆՈՅՆ ԴԻՐՔՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄԱՅՈՎ

ՊՐՕԳՐԱՄ

I. ՏԷՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ II. ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՅՕԴՈՒԱԾՆԵՐ։ III. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր։ IV. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր։ V. ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։ VI. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ VII. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Ֆելիետոն, վէպեր, ինքնուրոյն և թարգմանական յօդուածներ գիտութեան ամեն ճիւղերից, թղթակցութիւններ։ VIII. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ։ Տարեկան 10 բուբլ, վեց ամսվայ 6 բուբլ, իւրաքանչիւր ամսվայ 1 բուբլ։
ՀԱՏՈՎ համարները 5 կոպէկ։
ՀԱՍՑԷՆ։ *Тифлисъ, редакція «Мшакъ».*

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ *Մեր տնտեսական ապագայի մասին։* Նամակ Երևանից։ Նամակ Կարակուրտից։ Նամակ Գօրուց։ Նամակ Խմբագրին։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊԱԳԱՅԻ ԱՌԹԻՒ

I.

Ցայտնի տնտեսագէտներից մէկը հաստատում է, որ տնտեսապէս ոչ զարգացած ազգերը կարող են տեսնել իրանց ապագայ տնտեսական զարգացման ընթացքը հիմիկվայ տնտեսապէս աւելի զարգացած ազգերի պատմութեան մէջ,—ուրեմն ազգերի տնտեսական կեանքը զարգանում է յայտնի հասարակական օրէնքներով, և այս օրէնքները համարեա յատուկ են բոլոր երկրներին։—Ներկայ ամենաարդիւնաբերող երկրներում տիրապետում է տնտեսական այն սիստեման, որ կոչվում է քաղաքատնտեսական գիտութեան մէջ կապիտալիզմ. կապիտալ-դրամագլուխ գտնվում է փոքրամասնութեան ձեռքին, իսկ մեծամասնութիւնը ստիպված է ծախել իր աշխատանքը, որի համար նա ստանում է այնքան, որքան հարկաւոր է իր minimum (*ամենաքիչ*) *պիտոյքները լրացնելու համար. վաղուց է, որ այն երկրներում տիրապետում է անտագոնիզմ աշխատանքի և կապիտալի մէջ. թէ հասարակական գործիչներ և թէ պետական մարդիք ձգտում են խաղաղ կերպով վճռել այս մեծ տնտեսական հակասութիւնը, թէպէտ քիչ անգամ չէ փորձվել վճռել հարցը արիւնով։ Արդէօք իրաքանչիւր ազգ պէտք է անցնի այն տնտեսական ճանապարհով, որով անցել է աւելի քաղաքակրթված, աւելի արդիւնաբերող Եւրօպան, թէ կան ազգեր, երկիրներ, որտեղ կապիտալիզմը չէ կարող գոյութիւն ունենալ. այս նշանաւոր խնդիրը շատ զբաղեցնում է մանաւանդ ռուս տնտեսագէտներին. Ռուսաստանում ծաղկող տնային արդիւնագործութիւնները, դիւղական համայնքը և արտելները (ընկերութիւնները) և նոյն իսկ կապիտալիզմի չնչին յառաջադիմութիւնը՝ կարծես՝ համոզում են, որ կապիտալիզմը չի պիտի դառնայ տիրապետող տնտեսական սիստեման Ռուսաստանում, ինչպէս եղել է նա Եւրօպայում։ Մանաւորապէս այս հարցը հետաքրքրելի է մեզ—կովկասցիներիս համար. մեր լրագրութեան մէջ շատ անգամ հրաւիրել են մեր վաճառականների ուշադրութիւնը զանազան արդիւնագործութիւնների վրա, աշխատել են համոզել նրանց, որ աւելի ձեռնտու է մշակել մեր հում բերքերը, քան տեղափոխել նրանց հիւսիսային նահանգների կամ արտասահմանի վաճառականդէմները, բայց տարաբաղդաբար լրագրական հրաւէրները անպօր են տնտեսական կեանքին այս կամ այն ուղղութիւն տալու, մեր վաճառականութիւնը շարունակում է իր վաղեմի գործը—տեղափոխում է մեր երկրի հում բերքերը դէպի արդիւնաբերող կենտրոններ. թէպէտ մեր երկիրը ունի մեծ մասը այն պայմանների, որոնք հարկաւոր են գործարանական արդիւնագործութեան զարգացման համար, գոնէ այնքան, որքան ես ծանօթ եմ Կովկասի տնտեսական կեանքի հետ, կարողացել եմ այս հարցը պարզել իմ անձնական հետաքրքրութիւնը բաւականացնելու համար, ես այստեղ կը ներկայացնեմ այն ամենը, որի հիման վրա արել եմ վերոյիշեալ ենթադրութիւնը։

Գործնական արդիւնագործութեան համար անհրաժեշտ է ունենալ շուկայ տեղ, կամ աւելի պարզ ասել, մուշտարիներ. նոյն իսկ մեր երկիրը հիմա ներկայացնում է ռուս արդիւնագործութեան վաճառականութեան նշանաւոր տեղերից մէկը, ուրեմն մեր ապագայ գործարանական արդիւնագործութիւնը կունենայ իր մշտական ներքին մուշտարիները, մեզ հարևան երկիրներն էլ մասամբ կարող են համարվել վաճառականութեան կենտրոններ։ Ինչ վերաբերում է մշակներին, նրանք կը գան մեր դիւղերից, որտեղ հողի պակասութիւնը վաղուց զգատել է շատ ձեռքեր, միւս կողմից Պարսկաստանը և Տաճկաստանը կուղարկեն մեզ, ինչպէս հիմա ես ուղարկում են, իրանց էժանագին մշակներին։ Բնութեան հարստութիւնների մասին աւելորդ է ասել, որ քանի որ մեր բուրթը, մետաքսը, բամբակը, կաշին և ուրիշ հում ապրանքները մեծ քանակութեամբ մշակվում են Ռուսաստանի գործարաններում։ Իսկ կապիտալները կը տեղափոխվեն հիւսիսից դէպի հարաւ. արդէն այս տեղափոխութիւնը նկատվում է արդիւնագործութեան մի քանի ճիւղերի վերաբերմամբ։ Միւս կողմից տեղային առևտրական կապիտալները պէտք է դառնան արդիւնագործական կապիտալներ, այսինքն նոյն իսկ վաճառականը, որը հիմա միայն հում ապրանքներ է տեղափոխում, պէտք է մշակէ նրանց տեղական պիտոյքները լրացնելու համար։ Գիտութիւնն էլ այնտեղ է, որտեղ տեղաւորվում է կապիտալը։ Այսպէս մեր երկիրը ներկայացնում է բոլոր այն պայմանները, որոնք նպաստում են կապիտալիզմի զարգացման. մեր երկրի տնային արդիւնագործութիւնը այնքան չնչին է, որ հաղիւ կարողանայ դիմադրել գործարանական արդիւնագործութեան. հողի պակասութիւնը, հաստատ համայնքների և առհասարակ ընկերակցութեան բացակայութիւնը նոյնպէս նպաստելու են կապիտալիզմի զարգացման։ Ընդհանուր տնտեսական զարգացման հոսանքի մէջ կապիտալիզմը նշանաւոր քաղաքակրթական դեր է կատարում, նա ամենաընդարձակ կերպով օգտվում է գիտութեան հետևանքներով մարդու պիտոյքները լրացնելու համար. նա հասարակական քայքայված ոյժերը մօտեցնում է մէկ մէկու, ընկերացնում է, և այսպէս պատրաստում է այն հասարակատնտեսական տարրերը, որոնցից պէտք է բաղկանան ապագայի արդիւնաբերող ընկերութիւնները։ Մանաւանդ նա բարերար ազդեցութիւն կունենայ հայ ժողովրդի վրա, որի պատմական աչքի ընկնող յատկութիւններից մէկն է—հակաընկերական ոգին։ Երբ ես մեկնում էի մի ընկերական տնտեսական ձեռնարկութեան օգուտը մի քանի հայերին, նրանցից մէկը կտրեց խօսքս—իր յուսահատական համոզմունքով—եթէ երբէք հայ ընկերանան, անպատճառ պէտք է մէկ մէկուց գողանան, ուրիշ հնարք չը կայ,—ինձ թւում է որ հայ ժողովուրդը մինչև չի անցնի կապիտալիզմի վերլուծող և կրկին միացնող տնտեսական լաբորատորիայով՝ չի ընտելանայ ընկերական մեծ գաղափարի հետ։

II.

Անդրկովկասի տնտեսական կեանքը՝ անկասկած ենթարկվել է շատ մեծ փոփոխութիւնների վերջին քսան տարիները, երկաթուղիների և գործարանների բացվելը մեր քնած երկրի հանգստութիւնը կարծես քիչ խանգարել է։ Կապիտալիզմը արդէն աշխատում է ձեռք դնել մեր տնտեսութեան մի քանի ճիւղերի վրա։ Համարեա մեր աչի առաջ անհետացան տնագործ-ձեռնագործները, նրանց տեղ հաստատվեցին գործարաններ, որոնց մշակների խմբերը կազմակերպվեցին առաջվայ աղատ վարպետներից. ահագին արդիւնագործութիւնը կենտրոնացաւ մի քանի անհատների ձեռքին, քանի որ առաջ նա մեծ բաղմութեան ապրուստի միջոց էր։ Օդեհանութիւնը նոյնպէս կորցրել է իր առաջվայ անային կերպարանքը. գինեգործութեան կենտրոններում փոքրիկ այգիտէրերը ստիպված են իրանց ջէջը ծախելու մեծ գործարանատէրերին։ Այս երկու արդիւնագործութիւնները իրանց տնտեսական սիստեման ստիպված էին փոխելու պետական շահերի համեմատ, թէպէտ արդէն նկատված են նոր սիստեմայի բոլոր անյարմարութիւնները թէ ժողովրդի և թէ պետական գանձարանի համար։ Մետաքսագործութիւնը նոյնպէս մեծ գործարանական արդիւնագործութեան բնաւորութիւն է ստանում. Նովթի, Ագուլիս-Օրդուբաթ բժժից թելը քաշվում է կառարելագործված մեքենաներով, որոնք կապիտալիստների սեփականութիւն են. իսկ մետաքսից գործվածներ պատրաստվում են Շամախում դվնատրաստէս մեծ գործարաններում, փոքրիկ տնագործ չարքոֆները շատ հազուագիւտ են հիմա։ Շոգեշարժ ձիթհանները շատ շուտով կը սահմանափակեն գիւղական հասարակ ձիթհանքերի արդիւնագործութիւնը։ Էջմիածնի դաւառի մի շոգեշարժ ձիթհանը արդէն մեծ հարուած է տուել գիւղական արդիւնաբերողներին։

Բաղուն ներկայացնում է մի կենտրոն, որտեղ կապիտալ և աշխատանքի ներկայացուցիչների մէջ համարեա տիրապետում են մի և նոյն յարաբերութիւնները, ինչպէս և տնտեսապէս զարգացած արևմտեան Եւրօպայում. նոյն իսկ կապիտալիստները շատ անգամ ենթարկվում են այստեղ աւելի ուժեղների բռնութեան, միայն ահագին կապիտալների օգնութեամբ նաֆթի գործարանատէրը կարող է օգտվել բոլոր տեխնիկական կատարելագործութիւններով. անհատականութեան դերի ասիայի հայերը չը կարողացան ընկերութեամբ դէմ կանգնելու լուսաւորված եւրօպացուն, այն հայի ասածը—թէ երբ հայ ընկերանան, պէտք է մէկ մէկուց անպատճառ, գողանան շատ արդարացի է եղել բոլոր կողմերի հայերի մասին։ Բաղուի մեքենայական գործարանները, շոգեշարժ ջրաղացները և տակառագործարանները ներկայացուցիչներ են կապիտալիզմի։

Սպասենք, կաշին տնագործութեան արդիւնք էին, արդէն Թիֆլիս, Բաղու գործարաններ են հիմնված, որտեղ այս ապրանքերը մշակվում են։

Մի խօսքով կապիտալիզմի ծաղիկները քիչ քիչ երևում են մեր երկրի զանազան անկիւններում, նրա պտուղները տեսնելու բաղդաւորութիւն կամ անբախտութիւն կունենան գալոց սերունդները, մենք ոչինչ չունենք նրա առաջը առնելու համար. կապիտալիզմի բերած թշուառութիւնները լաւ յայտնի են. իրաքանչիւր քաղաքակրթված պետութիւն աշխատում է հակազդեցութեան տակ դնել նրան, զսպել նրան, մեղմացնել նրա տուած չարիքները, թէպէտ կապիտալիզմը շատ է սիրում «ազատ մրցում» և laisser passer laisser faire, մանաւանդ նա շատ վիրաւորվում է, երբ պետութիւնները խառնվում են տնտեսական յարաբերութիւններին, այնու ամենայնիւ պետական իշխանութիւնը ձգտում է կանոնաւորել կապիտալի և մշակների յարաբերութիւնները, և առհասարակ բոլոր տնտեսական հակասութիւնները, այսպէս առաջ է եկել պետական սոցիալիզմ ասված վարդապետութիւնը, որը ունի արդէն բազմաթիւ հետևողներ թէ տնտեսագէտներից և թէ պետական գործիչներից։ Ռուսաստանի նորագոյն կապիտալիզմը արդէն ենթարկվել է պետական հսկողութեան տակ,—նոր նշանակված գործարանական վերատեսուչները պէտք է պաշտպանեն երեխաների և կանանց աշխատանքը գործարանատէրերի հարստահարութիւններից, նոյնպէս պէտք է հսկեն, որ գործարանների առողջապահական պայմանները չը խանգարվեն գործարանատէրերի կողմից. անկասկած և մեր երկրի այժմ չնչին՝ բայց ապագայում բեղմնաւոր կապիտալիզմը կենթարկվի արժանի հսկողութեան տակ։ Մենք չենք նայում կապիտալիզմի վրա, ինչպէս հասարակական տնտեսական յարաբերութիւնների վերջնական նպատակի վրա, նրա մէջ դեռ չէ ապահովված իրաքանչիւրի բարոյական և նիւթական զարգացումը։ Նա մի անփախչելի ճանապարհ է, որը տանում է մարդկանց դէպի աւելի խելացի կեանք. նա մեզ ցանկալի է ոչ թէ ինքն ըստ ինքեան, այլ նրանով որ նա պէտք է պատրաստէ ապագայի հասարակական արդիւնաբերող ուժերը։

Թիֆլիս N. N.

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

Յունվարի 10-ին

Եկաւ նոր տարին։ Հին կլուբից տեղափոխվեցին նոր կլուբում, ընտրեցին նոր *ստարշինա* և նոր անդամներ։ Բաց դնեցին նոր կարտի նոր կալօղներ և սկսեցին նոր եռանդով նոր խաղեր։ Կարծիք չը կայ, որ ամեն լոպէ խում կարտաբանութեամբ և զուարճութիւններով չեն զբաղվի, այլ երբեմն էլ կը կարդան օրական լրագիրները, կարծարձեն ընթացիկ հարցերը, կը զարթեցնեն քաղաքի յառաջադիմութեան նպաստող նոր նոր և խելացի մտքեր և կը տարածեն հասարակութեան մէջ։ Ես երբէք չեմ կասկածում, որ կլուբի հասարակութիւնը, լինելով քաղաքի ամենազարգացած և ընտիր մասը, այդ ժողովարանը կը գործադրեն իր ազնիւ նշանակութեամբ։ Այս խօսքերը նրա համար եմ ասում, որ շատ ուրիշ քաղաքներում կլուբը,—որ պէտք է լինի մի օգտաւէտ ժողովարան, դարձնում են կատարելապէս գինետուն և սկսում են միայն պարելով, կոնծելով, բիլիարդ խաղալով և մանաւանդ կարտաբանութեամբ անցկացնել ամբողջ տարին։ Ցոյս ունենք, որ Երևանի նոր կլուբը միշտ կը մնայ իր բարձր և կրթողական նշանակութիւն ունեցող դիրքի մէջ։—

Կրթողական նշանակութիւն ունեցող միջոցներից մէկն էլ թատրոնն է, եթէ միայն նրա ան-

դամներն էլ փոքր ի չատէ կրթված լինեն և այդ հիմնարկութիւնը պահեն իրանց հովանաւորութեան տակ ոչ որպէս մի փող աշխատելու միջոց, այլ՝ որպէս մի կրթարան:

Երևանում երկու թատրոնական խումբ կայ, մինն էլ բարեկենդաններին է դուրս գալիս: Այս խումբերից առաջինը կոչվում է Էմինի խումբ և պէտք է խոստովանել, որ իր գործունէութեամբ նշանաւոր օգուտ է տուել Գայիանեան օրիորդական դպրոցին: Ինչպէս հաստատ աղբիւրներից երևում է 79 թվից մինչև հիմա մօտաւորապէս 3400 ր. փող է հասցրել դպրոցին:—Երկրորդ խումբը կոչվում է «Չահիլների խումբ», իսկ երրորդ խումբը դեռ մկրտված չէ: Ամեն բան լաւ է, բայց ցաւը նրանումն է, որ այս երեք խումբի մէջ միաբանութիւն, ներդաշնակութիւն չը կայ: Ամենքն էլ ուզում են առանձին առանձին քաջութիւններ անել, և, որ առաւել վատն է, մինը աշխատում է միւսի վարկը կոտրել հասարակութեան աչքում, վնասել նրա հեղինակութեանը և իրը դուրս գալ, բարձրացնել: Այսպիսի ընթացքով երկուսի վարկն էլ պակասում է և մէջ տեղը նիւթական վնասը մեր դպրոցներին է հասնում:—Մեր հայերի սովորութիւնն է, միշտ անմիաբանութիւն, ամեն տեղ, ամեն բանի մէջ կուսակցութիւն. դա նոր բան չէ հայերիս համար, դա պատմական ախտ է: Ո՛րքան գեղեցիկ և պաշտելի բան կը լինի, եթէ մեր թատրոնական խումբերը, անձնական մանր մունր հաշիւները, դատարկ բծախնդրութիւնները մի կողմ դնեն, ոյժերը միացնեն և միասին միաբանութեամբ գործեն, քան թէ այդպէս բաժան բաժան և ջլատված ոյժերով: Իրանց միանալով, հասարակութիւնն էլ է թողնում կուսակցութիւնը և միանում. որովհետև մէկն ասում է՝ ես Էմինի ներկայացման կը գնամ, միւսն ասում է՝ ես միւս խմբի ներկայացումին կը գնամ և այլն:

Նոր տարին, Զրօհնէքը անցկացաս, բայց մեր թատրոնասէրները ոչ մի ներկայացում չը տուին: Ինչպէս երևում է բարեկենդաններին պիտի փայլեցնեն բոլորն էլ իրանց հնարքները: Ցանկանում ենք սէր, միաբանութիւն, և յաջողութիւն:

Ամերիկայից եկող պ. Ղ. Ներսէսեանը իր ֆոնոգրաֆով և տելեֆոնով միանգամայն զարմացրեց Երևանի հասարակութիւնը, որոնք ամենայն ջերմեռանդութեամբ թափվում էին ներկայացումներին: Պ. Ներսէսեանը մի քանի՝ թէյի բաժակների վրա ձեռքերը չօշափելով այնքան գեղեցիկ եղանակներ էր ածում և հանդիսականներին զոհացնում, որ ոչ մի երաժշտական ամենաթանկագին գործիքի վրա չէր կարելի ածել:

Այս տարի մինչև դեկտեմբերի վերջերին ոչ միայն ցուրտ չէր, այլ շատ անգամ մայիսի նման յորդ անձրևներ էին գալիս: Կտուրները, այգիները, առուակների ափերում սկսեցին կատարեալ կանաչել: Եկաւ 84 թիւը բերեց իր հետ և ձմեռը: Այժմ բաւականին ցուրտեր է անում առաւօտները:

Անցեալ օրերում մի կառավար քաղաքիս դվորտոր հրապարակում, դաշոյնով սպանեց իր պաշտօնակցին: Այսպիսի մի մարդասպանութիւն էլ պատահեց Թալար այգում, բայց սա, ինչպէս պատմում են, միամտաբար է պատահել:

Բ. Ե.

ՆԱՄԱԿ ԿԱՐԱԿՈՒՐՏԻՑ

—

Յունվարի 7-ին

Անցեալ դեկտեմբերի 29-ին, առաւօտեան ուղիղ 11 ժամին Կարակուրտում զգալի էր թեթև երկրաշարժ արևելքից դէպի արևմուտք ուղղութիւնով, որ տևեց $1^1/_2$ վայրկեան (секунда): Նոյն օրը, նոյնպէս 27 և 28 երեկոյեան դեղեցիկ տեսարան էր ներկայացնում Կարակուրտի արևմտեան կողմը: Արեգակը մտնելից յետոյ հորիզոնը պայծառ կարմիր գոյնով էր ներկվում, և այս երևոյթը շարունակվում էր մօտ մի ժամ: Նոյն տեսարանը, ինչպէս հաղորդում են «Русскій Курьеръ» լրագրին, եղել է և Պետերբուրգում 15 դեկտեմբերի առաւօտեան 8 ժամից մինչև 9. միայն այնտեղ բոլոր երկինքը, կարծես թէ, ոսկեզօծված է եղել, մինչև անգամ առարկաներն ևս նոյն գոյնն են եղել ներկայացնում: Այս երևոյթի պատճառը, որի վրա, մանաւանդ ամբոխը, նայում է ինչպէս գուշակող պատերազմի կամ զանազան մոտիապաշտական դատողութիւններ է անում, աւելորդ չենք համարում յայտնել, ինչպէս բացատրված է «Новости» լրագրի վերջին համարներից մինում: Բնագէտները, լրագրի խօսքերով, հետևեալ կերպով են մեկնում այս երևոյթը: Ցայտնի է, որ Եաֆֆա կղզու վրա մեծ երկրաշարժ պատահեց, որից մեռել են 40 հազար մարդ: Երկրաշարժի հետ միասին եղել է այնտեղ հրաբուխ լեռների վիժումն (изверженіе): Այն թողը, որ յառաջացել է հրաբուխներից, տարածվել է մթնոլորտում և օդի շարժողութիւնից ցրվում է զանազան տեղերը:

Որքան շատ, ասում են գիտնականները, պինդ մասեր են գտնվում օդում, այնքան արեգակի ճառագայթները առաւել ևս են կուտաւորվում որից և յառաջանում են օդի գոյները:

Թող, ուրեմն, հանդարտվի այժմ Ախալքալաքի ռամիկ ժողովուրդը, որ գուշակել է արիւնահեղ պատերազմ, ինչպէս յայտնած է «Մշակի» № 205 ներքին լուրերում, որ քաղաքի արևմտեան կողմի սաստիկ կարմրելը ոչինչ դերբնական երևոյթ չէ, այլ առաջանում է ֆիզիքական օրէնքներից:

Կարակուրտում, ուր Կուրանեան հեծելազօր գընդի շտաբն է, կայ այժմ ռուսաց եկեղեցի սուրբ Գէորգ անունով: Երբ այստեղ բնակվում էին մահմետականներ, որոնք տեղափոխվեցան Թիւրքիա, նրանց համար այն եկեղեցին մզկիթի տեղ էր ծառայում: Եկեղեցին չինված է մեծ տաշած քարերից և նրան կից է մի ամբակ մատուռ: Երկուսն էլ առանց գմբեթի են, որ, ինչպէս երևում է պատերին կից սիւներից, եղել է յառաջ: Ինչպէս երևում է եկեղեցու դրսի պատի վրա մի տեղում մնացած հայկական տառերից պէտք է ի հարկէ եզրակացնել, որ հայոց եկեղեցի է եղել: Մի քանի գերեզմանաքարերի վրա դանվում են փորագրված խաչեր, բայց առանց որ և իցէ գրուածքի: Օրերն այստեղ տաք են, այնպէս որ ձիւնը բաւական հալվում է, բայց գիշերները ցրտում է:

Կարակուրտը ծովի մակերևոյթից մօտ 3 հազար ֆուտ բարձր է:

բժիշկ Ա. Մելիքմանեանց

ՆԱՄԱԿ ԳՕՐՈՒՑ

—

Յունվարի 11-ին

Ամսիս 8-ին պ. և տիկ. Սաֆրազեանց, մասնակցութեամբ պ. Սարգսեանցի և տեղական հայ ուսուցիչների—պ. պ. Խիթարեանցի և Տէր-Յարութիւնեանցի տուեցին մի ներկայացում: Խաղացին «Շուշանիկ» ողբերգութիւնը, որի երկրորդ գործութիւնը վրացերէն լեզուով էր, և «Կրութ-կրութ» վոդեվիլը: Ներկայացումը շատ լաւ անցաւ և հասարակութիւնը գոհ մնաց:

Այստեղ ձմեռը անտանելի է: Անդադար ձիւն է գալիս, որը հալվելով անանցանելի ցեխ է գոյացնում: Քաղաքային վարչութիւնը ամենևին ուշադրութիւն չը դարձնում փողոցների մաքրութեան վրա:

Անցեալ անգամ տեղիս հայ սիրողները տուեցին մի ներկայացում հայերէն և վրացերէն լեզուներով, որից գոյանալով 28 ր. հայոց ուսումնարանի համար մանկական ընթերցանութեան գրքեր գնուեցան:

Տեղացի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, յունվարի 12-ին

«Մեղու» լրագրի անցեալ թվի 118-ում Ղարաքիլիսայից պ. Ն-եանը (անդամ շինական դատարանի) իր կարծիքով որպէս թէ հերքում է «Մշակում» տպագրված նամակիս այն պարբերութիւնը, որը վերաբերում է շինական դատարանի արած զեղծումներին. ուստի թող ների ինձ խմբագրութիւնդ, որ լրագրիդ միջոցով հարկաւոր եմ համարում մի երկու խօսքով նրան պատասխանել՝ և հրապարակաւ առաջը դնել իր սխալները: Ցայտնի է, որ ինդիրը ինքն ըստ ինքեան դատարկ բան է, սակայն այդպիսիները թող զգոյշ լինեն, որ իրանց պաշտօնի չափ ու սահմանից դուրս չելնեն:

Ես իմ նամակիս մէջ ընդհանրապէս խօսելով ցոյց չէի տուել, թէ յիշածս զեղծումները որոնց օրով են կատարվել, սակայն պարոնի պատասխանը պարզ ապացուցանում է, որ սխալը կերել է և հոտը արդէն փչում է. նրա կարծիքով, որովհետև ոչ ոք չէ համարձակվել իրանց զեղծմանց մասին խօսել, հետևաբար իմ գրածս էլ զրպարտութիւն է (ինչ լոգիկա). մի և նոյն ժամանակ, պարոնը իրան արդարացնում է նրանով, որ ես լինձ վերաբերեալ մի վճռի պատճէնը վերցրել և նահանգ. դատարանը ապելացիա եմ տուել, իսկ վերջինս կրկին հաստատել է նրան: Նախ պարոնը թող գիտենայ, որ ես իմ առանձին նպատակներն եմ ունեցել, ըստ որում, պարոնը իրաւունք չուներ իմ ներքին տնօրէնութեանց մէջ մտա գործել, երկրորդ որ ես ապելացիան տուել եմ ժամանակից շատ ուշ:

Այժմ հարցնում եմ պարոնին, 1. շինական դատարանը իրաւունք ունի հոգևորականներին դատի կանչել և նրանց վրա վճիռ կայացնել. 2, շինական դատարանը իրաւունք ունի ուրիշ հասարակութեան պատկանող անհատներին իր նոր օրէնքով դատել (թող յիշէ պարոնը վարդանլեցի Նազարի տղի գործը). և 3, պ. Ն-եան, ձեռքդ կուրծքիդ վրա դրած կը խոստովանիս, որ ոչ մի խընդրում կեղծաւորութիւն և կողմնապահութիւն չես արել: Բայց չէ, պարոնի նպատակը չէ եղել մի որ և է իրողութիւն ստելը, այլ թէ ցանկացել է հրապարակասի դեր ընդունելուց յետոյ, քանակուտ անհատի պաշտօն ևս կատարել:

Մեք. Տէր-Յարութիւնեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Աղմալիր, 10 յունվարի

Թէ ներկայ և թէ անցեալ վերջին երկու տարիների Էջմիածնի օրացուցի հետ կցած այդտեղ (Էջմիածնի տպարանում) տպված գրքերի ցանկի տակ աչքի է ընկնում բացատրութեան կարօտ հետևեալ մի ծանօթութիւն. «Ընդ մամլովք են դատաստանագիրք Մխիթար Գոշի» և այլն: Այդ ծանօթութիւնը, որ մի տեսակ յայտարարութիւն է, ահա մի քանի տարի վրա ու վրա մի և նոյն բան կրկնելուց յետոյ, այս անգամ էլ ոչինչ բացատրութիւն չէ տալի այն հետաքրքիր հանգամանքի մասին, թէ արդեօք ինչ է պատճառը, որ Էջմիածնի տպարանը, ուր տարին հազիւ մի երկու գիրք է տպվում, մինչև հիմա չէ կարողանում մամուլի տակից հանել այն դատաստանագիրքը, որի տպագրութիւնը սկսվել է համարեա երեք ու կէս տարի սրանից առաջ և որի գիտական նշանակութիւնը արդէն յայտնի է ընթերցող հասարակութեանը «Փորձ» ամսագրից (№ VI, VII-VIII և IX, 1879 թ.-Դատաստանագիրք Մ. Գոշի, իրաւաբանական հետազօտութիւն): Ուրեմն մի այդպիսի նշանաւոր գիրք, որ մի անգին գոհար է համարվում մեր մատենագրութեան մէջ և որ, ինչպէս ասեցինք, վաղուց արդէն մտել է մամուլի տակ, որ ի հարկէ հանդուցեալ կաթողիկոսի հրամանով պէտք է լիներ, փոխանակ օր առաջ տպագրութեամբ լոյս հանելու, հարցնում ենք, արդեօք ինչ է պատճառը, որ մինչև հիմա մամուլի տակ է մնում: Այդ հետաքրքիր գործի բացատրութիւնը նոյն իսկ գործին մասնակցողների բարեհաճ կամք լինելով, այստեղ այդ գրքի հրատարակութեամբ հետաքրքրվողների համար աւելորդ չէր լինի մի քանի խօսք ասել այն առթիւ միայն՝ թէ արդեօք ինչպէս է սկսվել այդ երևելի հին մատենագրութեան տպագրութիւնը և այդ գործը, որ սկսել է հանդուցեալ Վահան ծ. վարդ. Բաստամեանը, ինչ (մեզ յայտնի) դրութեան մէջ է մնացել նրանից յետոյ:

Ինչպէս յայտնի է «Փորձ» ամսագրից, հանդուցեալ հայր Բաստամեանը երկար տարիներ ուսումնասիրելով Մ. Գոշի դատաստանագիրքը, նա այդ ձեռագրի 10-ից աւելի զանազան օրինակները բաղդատելուց յետոյ, գտնում է մի աւելի ընտիր և կատարեալ օրինակը. ահա այդ օրինակը հանդերձ մի ընդարձակ յառաջաբանով (վերոյիշեալ իրաւաբանական հետազօտութիւնով), 1000-ից աւելի բացատրողական ծանօթութիւններով և գրքի այլ և այլ օրինակների բաղդատութիւններով պատրաստում է նա տպագրութեան համար: Երբ, 1879 թ. վերջերին, գրքի բոլոր աշխատութիւնները վերջացած են լինում, հանդուցեալը յայտնում է Մանկունուն տպել այդ երևելի հին մատենագրութիւնը Էջմիածնի տպարանում 1200 օրինակով, բոլոր ծախքը տպարանից, 600 օրինակ յօգուտ իր (հայր Բաստամեանի) և մնացած 600 օրինակ յօգուտ տպարանի. բայց Մանկունին բացատրում է, առաջարկելով բարերար գտնել: Հայր Բաստամեանը ամաչելով իբրև միարան Էջմիածնի բարերարներ որոնել կամ բաժանորդագրութեամբ տպել, որ ի հարկէ պատիւ չէր բերի վեհարանի իշխանութեան, լաւ է համարում իր այդ երկասիրութիւնը ներկայացնել հանդուցեալ պ. Խրիմեանցի մատենադրական մրցանակին. մրցանակի գիտական յանձնաժողովը արժանի է գտնում այդ երկասիրութիւնը պսակել մրցանակով, և հայր Բաստամեանը ստանում է 500 ր. մրցանակագրամը: Ահա այդ գումարը դառնում է սկզբնապատճառ դատաստանագրքի տպագրութեան, որի արդիւնքը հանդուցեալը մտադիր էր գործ դնել իր մի այլ աշխատասիրութեան տպագրութեան վրա:

Մրցանակագրամը ստանալուց յետոյ, հայր Բաստամեանը պարտք է համարում իր երկասիրութիւնը նուիրել մրցանակի հիմնադրող Յ. Խրիմեանցին և Թիֆլիսից բերել տալով 32 օղմա թուղթ, *) պատրաստութիւններ է տեսնում գրքի տպագրութիւնը սկսելու համար: Այդ տեսնելով Մանկունին, իսկոյն խորհուրդ է տալի հանդուցեալին գիրքը նուիրել կաթողիկոսին և տպագրել Էջմիածնում. առաջին հարցը աւելս մնալով, տպագրութիւնը սկսվում է այդտեղ ամեն մի տպագրական թերթից տպարանին 14 ր. վճարելու պայմանով: Բայց ցաւ ի սիրտ պէտք է ասած, որ հէնց գործը սկսած օրից մինչև հայր Բաստամեանի մահը, մօտ 12-15 ամսվայ ընթացքում, և դրանից յետոյ մինչև 1882 թ. սեպտեմբերի վերջը, 10 ամսվայ ընթացքում, գրքի տպագրութիւնը այնպէս դանդաղ է գնում, որ այդ ամբողջ երկու տարվայ միջոցում հազիւ հազ դուրս է գալի մամուլի տակից, այն ևս առանց արտաքին վայելուչ մաքրութեան և գեղեցկութեան, ընդամենը 224 երես գրքի ընագրից և մի 80 երես էլ յառաջաբանից բոլորը 304 երես, որ հազիւ գրքի կէսն է կազմում, որովհետև ամբողջ գիրքը յառաջաբանի հետ միասին մօտաւորապէս 600 երեսից բաղկացած պիտի լինի կամ գուցէ և մի փոքր աւելի: Ահա այդպէս է սկսվել և այդպէս է շարունակվել այդ երևելի հին մատենագրութեան տպագրութիւնը մինչև յիշեալ թուականի սեպտեմբերի վերջը: Բայց թէ դրանից յետոյ մինչև հիմայ ինչպէս է շարունակվել այդ գործը և թէ դեռ ևս քանի օր, քանի ամիս, քանի երկար տարիներ պիտի քաշէ այդ դժբաղդ գրքի տպագրութեամբ լոյս աշխարհ գալը, դրա մասին մեզ ոչինչ յայտնի չէ և չենք էլ կարողացել բան իմանալ: Գուցէ սրանից յետոյ դրա մասին, որոնց որ հարկն է կը բարեհաճեն մի երկու խօսք նուիրել: Ուրեմն մի փոքր էլ սպասենք:

Աւարտելով խօսքս՝ ի դէպ հարկաւոր եմ համարում այն ևս ասել, որ բացի յիշեալ երկասիրութիւնից, հանդուցեալ հայր Բաստամեանը թողել է և մի այլ ընդարձակ աշխատասիրութիւն, որ մեր եկեղեցու և կաթողիկոսների պատմութիւն է: Այդ պատմութիւնը, որ հանդուցեալը հասցրել է մինչև 1780 թուականը կամ մինչև կարնեցի Ղուկաս կաթուղիկոսը, թարգմանել է նա Զամչեանի պատմութիւնից, հարստացնելով այն և ձեռագիրներից քաղած տեղեկութիւններով և իր սեփական դատողութիւններով: Այդ աշխատասիրութեան սապրութիւնը հանդուցեալը տուել էր մեզ կարդալու. իսկ սրբագրածի առաջին մասը, ինչպէս հանդուցեալը ասում էր, տուել է նա Մանկունուն, երևի նոյնպէս կարդալու: Թէ այդ ձեռագրի և թէ առհասարակ հանդուցեալի գրաւոր աշխատութիւնների մասին, եթէ յաջողվի, մի այլ անգամ կը խօսենք:

Մեծապատիւ խմբագիր, թէև այս տեսակ չոր ու ցամաք նամակները պատուական «Մշակ» լրագրի մէջ չեն տպվում, բայց և այնպէս ի նկատի ունենալով, որ խօսքը, քիչ թէ շատ, մի երևելի հին մատենագրութեան մասին է, իբրև բացառութիւն, բարեհաճեցէք վերոյիշեալ տեղեկութիւնները լրագրի մօտակայ համարներից մէկում հրատարակել ի գիտութիւն այդ գրքի հրատարակութեամբ հետաքրքրվողների, որոնցից շատերը այդ մասին դիմել են և դիմում են ինձ, իբրև գործին աւելի մօտիկ ծանօթ անձնաւորներից մինը...

Ոմն

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մենք իմացանք, որ Թիւրքիայի հայերը արդէն ընտրել են իրանց համար այն անձը, որին պէտք է ներկայացնեն կաթողիկոսական ընտրութիւնների ժամանակ, որպէս կաթողիկոսացու: Դա Յարութիւն եպիսկոպոսն է, Էրզրումի նախկին առաջնորդ, որ անչափ հարուստ մարդ է և համարվում է անպշիական կուսակցութիւնը պատկանող: Յարութիւն եպիսկոպոսը, ինչպէս յայտնի է, ծագումով հայ չէ, այլ նա մկրտված և հայոց կրօնը ընդունած մի արաբ է:

*) Բացի այդ թղթից հայր Բաստամեանը յետոյ, կանխապէս ուղարկելով փող, ապսպրում է Թիֆլիսից դարձեալ 16 օղմա թուղթ, որ և ստացվում է նրա մահից յետոյ. այդ բոլոր 48 օղմա թուղթը ճանապարհածախքով նստում է 335 ռուբլի:

Սասունք Կարակուրտից բժիշկ Ա. Միրիմանեանցից 10 ռուբլ պ. Բաֆֆիի յօբելեանի առիթով, որ և անմիջապէս յանձնեցինք ուր հարկն է:

—

«Դրօշակ» լրագրին հաւատացնում են, որ Մըցխէթում, Թիֆլիսեցի մի այրի կնոջ ինիցիատիվով, հայոց եկեղեցուն կից բացված է մի գիւղական ուսումնարան, որը նոյն կնոջ միջոցներով, ամեն տեսակ յարմարութիւններ ունի: Զը նայելով այն բանին, որ Մցիխէթում մօտ քառասուն ծուխ հայեր են բնակվում, ուսումնարան կառավարող տեղական քահանան ոչ մի աշակերտ չէ կարողանում գրաւել դէպի իր ուսումնարանը: Ով ծանօթ է Թիֆլիսի նահանգի մեր գիւղերի կեանքի հետ, աւելացնում է լրագիրը, «նրան չի զարմացնի այդ հանգամանքը, որովհետև այդ տեղերում հայերը ոչինչով չեն զանազանվում վրացիներից—ոչ լեզուով, ոչ էլ սովորութիւններով»:

—

«Русскія Вѣдомости» լրագրին Ս. Պետերբուրգից հեռագրում են, որ ռուսաց «Дѣло» ամսագիրը Սանկտ-Օվիչն սեփականութիւն դարձաւ:

—

«Новое Обозрѣніе» լրագրին հաղորդում են, որ Օրբէլեան իշխանները դատ են սկսում ժառանգութիւն պահանջելով իրանց ազգակցից, որ բնակվում էր Հնդկաստանում և որի մահուանից յետոյ միլիոնաւոր հարստութիւն մնաց Լօնդօնի և Փարիզի բանկերում:

—

Վերջին ժամանակներում, որպէս գրում են «Каспія» լրագրին, կէրօսին գնողներ Բագուի մէջ բոլորովին չը կան. Բաթումում նոյնպէս չը կան. Օդէսայում ամենչան քանակութեամբ ծախվել է 1 ր. 10 կոպէկով:

—

Նոյն լրագիրը հաղորդում է, որ Միրզոեվ եղբայրները մօտ 4 միլիոն պուդ նաֆթ ծախեցին, իւրաքանչիւր պուդը Սև քաղաքը $2^3/_4$ կոպէկով հասցնելու պայմանով: Նաֆթը յանձնելու ժամանակամիջոցը որոշված է մինչև ներկայ 1884 թ. նաւադրացութեան փակվելը:

—

Դեռ 1878 թվին, ասում «Новое Обозрѣніе» լրագիրը, Թիֆլիսի դուման վճռեց քաղաքի բոլոր գերեզմանոցները տեղափոխել քաղաքից դուրս և կենտրոնացնել Նաֆթլուղի յետև գտնվող ձորում: Այդ նախագիծը չը կարողացաւ այնու ամենայնիւ այն ժամանակ իրագործվել, որովհետև դեռ ևս չէր աւարտված Բագուի երկաթուղու կառուցումն, որով մատդրութիւն կար տանել ննջեցեալներին: Այժմ այդ ճանապարհը արդէն բացված է, բայց գերեզմանոցների տեղափոխութեան գործը դեռ ևս անկատար է մնում, որովհետև անդրկովկասեան երկաթուղու ընկերութիւնը չը բարեհաճեց կատարել իր յանձն առած պարտաւորութիւնը՝ երկու կիսակայարաններ կամ պլատֆորմներ չինելու մասին՝ մէկը քաղաքի սահմանում և միւսը—Նաֆթլուղի ձորի մօտ, առանց որի հանգուցեալների տեղափոխութիւնը անհնարին է:

—

«Русскій Курьеръ» լրագրին հաղորդում են, որ ի նկատի առնելով պոլիցիայի բազմակողմանի պարտաւորութիւնները, որից սահանջվում է մասնագիտական պատրաստութիւն, ապագայում ոստիկանութեան մէջ պաշտօն կը տանեն այնպիսի անձինք, որոնք քննութիւն կը տան առանձին քննող յանձնաժողովում:

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՄՈՍԿՎԱ, 13 յունվարի: Երէկ Մոսկվայի համալսարանը ոտնում էր իր գոյութեան 129 տարեդարձը ներկայութեամբ Մոսկվայի զինուորական նահանգապետի, ուսումնարանական շրջանի հոգաբարձուի, նրա օգնականների և ուրիշ պատուաւոր անձանց: Պրոֆէսոր Լէրիէ մի ճառ արտասանեց, որ վերջացրեց մօտաւորապէս հետևեալ խօսքերով. «Ռուսաց համալսարաններից ամենահինը գիտէ իր կոչումը կրթել երիտասարդ սերունդը սիրով դէպի գիտութիւնը և ազգային աւանդութիւնները, մի և նոյն ժամանակ կրթել սերունդը այնպէս, որպէս զի նա կարողանայ կառավարութեան օգնական լինել նրա հասարակ յայտնութիւնների մէջ»: Ճառը ծափահարութիւններով ընդունվեցաւ: Հանդէսը վերջացաւ ժողովրդական հիմնի երգելով, իսկ ակտից յետոյ ընկերական ճաշ կար Մոսկվայի հիւրանոցի մէջ: Արտասահմանի լրագրների մէջ Ռուսաստանի նորերումս յայտնված լուրերի առիթով, Ռուսաստանի պետական կազմակերպութեան փոփոխութիւնների մասին «Моск. Вѣд.» լրագիրը մի երկար յօդուած տպեց, որի մէջ ցոյց են տրվում այդ աչքինչ բանի վրա չը հիմնված լուրերի վնասակար հետևանքները: Լրագրի խօսքերի համեմատ այդ լուրերին առիթ տուեց այն հանգստութիւնը, որ տիրեց անցեալ թագաւորութեան փոթորկալի անցքերից յետոյ: Այժմ ամեն բան հանգիստ է: Բարձրից երկիրը անհանգստացրած չէ, մի և նոյն ժամանակ չէ երևում, թէ նրա դորձերը ինչ ուղղութիւն ունեն, ի՞նչ է սպասում երկրին ապագայում, ի՞նչպիսի կարգ ու կանոն կը մացվի և կը տիրապետէ նրա մէջ, ի՞նչպիսի ձև պէտք է ստանան այն նոր հիմնարկութիւնները, որոնցով լի էր անցեալ թագաւորութիւնը: Ցոյց տալով միջոցները, նկարագրելով անցեալը և ներկայ դրութիւնը լրագիրը վերջը ասում է. »Ուրեմն պէտք է որ և է վճիռ կայացնել. արդեօք Ռուսաստանը պէտք է մնայ դարձեալ Ռուսաստան իր եկեղեցով, իր պետական իրաւունքով, որի մէջն է նրա էութիւնը, թէ մեզ յայտնի Ռուսաստանի տեղ պէտք է առաջ գայ մի նորը՝ մեզ անյայտ: Այն անցողական դրութեան մէջ, որին մենք այժմ ներկայ ենք, անդադար անբնական երևոյթներ են յայտնվում և խելօք մարդիկ երբեմն խելագարված են երևում: Մեզանում երկուսի, երեքի, տասի են բաժանվում: Երաշների մէջ մի ինքնակալութեան տեղ, որին մենք հասել ենք մեծ աշխատանքով, մեր ամբողջ պատմութիւնով և որը բոլորը առողջ դատողութիւն ունեցող մարդկանց համար անխախտ է մնում, մենք երազում ենք շատ ինքնակալութիւնների ուրուական, որ աւելի և աւելի տերապետում է մեր գործերին: Ժամանակ է ազատվել այդ ուրուականից: Դրա համար ոչ առանձին ջանքեր են հարկաւոր և ոչ էլ փոփոխութիւններ: Պէտք է միայն կանոնաւորել այն հիմնարկութիւնները, որոնք ստեղծված են ոչ թէ երևակայական, այլ իսկական Ռուսաստանի համար, հարկաւոր է նրանց ճշմարտութեանը հասցնել այսինքն համաձայնեցնել նրանց ռուսաց պետական իրաւունքին, որի ձևը նրանք պէտք է դորձադրեն: Այն ժամանակ Ռուսաստանի մէջ ամեն բան այլ կերպ կը կատարվի: Այն ժամանակ վերջ կը դրվի հասկացողութիւնների շփոթութեանը: Երբ լրիւ չասվածը կասվի և անհասկանալին կը պարզվի, նոյն հիմնարկութիւնները այլ կերպ կը դորձեն և այն ժամանակ միայն ամենքը կը գնահատեն այն վերանորոգութիւնների բարերար ազդեցութիւնը, որոնք նորոգեցին Ռուսաստանը անցեալ թագաւորութեան ժամանակ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 յունվարի: «Правит. Вѣстн.» լրագրի մէջ տպված է Մոսկվայի ազնուականութեան ամենահպատակ հետևեալ ուղերձը. «Ամենաողորմած թագաւոր, Մոսկվայի ազնուականութիւնը անսահման հաւատարմութեան արտայայտութեան հետ մատուցանում է Ձեր Կայսերական Մեծութեան ոտքերի առաջ իր ամենահպատակ շնորհակալութիւնը այն առաջնորդող, իմաստութեամբ և ողորմութեամբ լի խօսքերի համար, որոնք ձեր սրբազան թագադրութեան ժամանակ բաղդաւորութիւն ունեցան միասին լսել թագաւորական շրջանակներից ազնուականութեան և գիւղացիների ներկայացուցիչները: Հրաւէրից քաջալերված և պարտականութենից դրդված Մոսկվայի ազնուականութիւնը համարձակվում է վկայել իր պատրաստակամութիւնը, ինչպէս և միշտ, ծառայել հաւատարմութեամբ Ինքնակալ թագաւորին, սրբութեամբ պահպանելով նրա օրէնքը, պահպանելով Նրա գերիշխանութեան իրաւունքները, որոնց պատմութեան աւանդը համարում է հայրենիքի բարօրութեան գրաւական և նրա ամբողջութեան և զօրութեան հիմնաքար: Թող Աստուած օրհնէ ձեզ, Ամենաողորմած թագաւոր, թագաւորական ճանապարհի համար, թող օգնէ Ձեզ և Ձեր պետական աշխատանքներին, թող ամրացնէ Ձեր ձեռքը հասարակական ապահովութիւնը և օրինաւոր իրաւունքը պաշտպանելու, պետութիւնը հաստատելու, անարդարութիւնը և ապօրինութիւնը ոչնչացնելու համար: Մենք ուրախ ենք, թագաւոր, որ Ձեր կառավարչական մտքի մէջ միմեանց մօտենում են երկու դասակարգեր, որոնք միացած են ընդհանուր օգտի և գործի բնական կապերով: Նրանց բարի համաձայնութիւնը ներքին խաղաղութեան ամենալաւ գրաւական է և կարող է ամրացնել այն յարաբերութիւնները, որոնք ցոյց են տուած անցեալ մայիսի 21-ի ձեր արտասանած խօսքերի մէջ և կը ստեղծի մի հիմք, որի վրա Ձեր Մեծութիւնը կը յենվի իր բարի գործքերի ժամանակ պետութեան թշնամիների դէմ“: Թագաւորը ճշմարիտ բաւականութեամբ կարդալով այս ուղերձը, բարեհաճեց շնորհակալութիւն յայտնել Մոսկվայի ազնուականութեանը, նոյնպէս և Մոսկվայի զինուորական նահանգապետին:

ՕԴԷՍՍԱ, 13 յունվարի: Մոսկվա-Կուրսկի, Կուրսկ-Կիեվի և հարաւ-արևմտեան երկաթուղիները համաձայնվելով „շոգենաւային Ռուսաց ընկերութեան“ հետ փոքրայրին տարիքը հանքային իւղերը Կովկասեան նաւահանգիստներից Մոսկվա տեղափոխելու համար մինչև $57^1/_2$ կ. պուդից ամբողջ տարածութեան վրա:

ՎԻԵՆՆԱ, 13 յունվարի: Ֆլորիդսդորֆի մէջ այսօր սպանված է խուզարկող պոլիցիական բիէխ: Մարդասպանը փորձեց փախչել, բայց նրան բռնեցին անցորդները և հասցրին պոլիցիա: Ինչպէս երևում է, նա պատկանում է բանւոր դասակարգին, բայց հրաժարվում է ցուցմունքներ տալուց: Նրա մօտ գտնված է դինամիտով լցրած ռումբ, բէվոլվեր և թունաւորված դաշոյն:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 յունվարի: Պետական բանկի $5^0/_0$ տոմսակը առաջին շրջանի արժէ 94 ր. 75 կ., երկրորդ 94 ր. 75 կ., երրորդ 94 ր. 62 կ., չորրորդ 94 ր. 37 կ., հինգերորդ 92 ր. 75 կ., ներքին $5^0/_0$ առաջին փոխառութեան տոմսակը արժէ 215 ր. 50 կ., երկրորդ 211 ր., 75 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 92 ր. 75 կ., երկրորդ 92 ր. 75 կ., երրորդ 92 ր. 75 կ., ոսկի 8 ր. 44 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ $23^6/_{16}$ պէնս, ռուսաց 100 ռուբլ Համբուրգի վրա արժէ $198^3/_4$ մարկ, Փարիզի վրա 245 ֆրանկ: Բօրսայի տրամադրութիւնը թոյլ է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 յունվարի: Երէկ վերադարձաւ արտասահմանից ռուսաց արտաքին գործերի մինիստր Գիրս:

ՓԱՐԻԶ, 13 յունվարի: Ցայսմի դրող Էդմոնդ-Աբու ընտրված է ֆրանսիական ակադեմիայի անդամ: Տեղեկութիւն է ստացված, թէ բակինինգի խուզարկութիւններից երևացել է, որ այնտեղ մեծ թուով կենտրոնացել է թշնամին:

ԼՕՆԴՕՆ, 13 յունվարի: Միջոցներ են գործադրված Եգիպտոս տաս հազար զօրք ուղարկելու համար:

ԿԱՅԻՐԷ, 13 յունվարի: Խէդիվի կառավարութիւնը վճռեց ձեռնարկել դատաստանական վերանորոգութեանը այն պետութիւնների աջակցութեամբ, որոնք մտնակցեցին միջազգային դատարանների կազմակերպելուն:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 յունվարի: „С.-Петербург. Вѣд.“ լրագիրը հաղորդում է, որ կալուածական տուրքը մեծացնելու օրինագծի հետ, որը փոխանակում է գլխահարկին, միաժամանակ կը ներկայացվի պետական խորհուրդին մի նախագիծ, որի համեմատ տարեկան 50 կ. հարկ պէտք է վերցվի ռուսաց և մշտապէս Ռուսաստանի մէջ ապրող օտարահպատակներից արական սեռի, սկսած 18 տարեկանից մինչև 50 տարեկան հասակը: Հարկից ենթադրված է ազատել՝ զինուորական ծառայողներին, վիրաւորվածներին, աշխատանքի համար անընդունակներին, ուսանողներին, հոգևորականութեանը, օտար դիպլոմատներին և հիւպատոսներին: Արդարութեան մինիստրութեան խորհրդի Իւրիսկոնսուլտ Սաուդէնցով նշանակված է արդարութեան մինիստրութեան բաժնի փոխդիրեկտոր:

ՄՈՍԿՎԱ, 14 յունվարի: Երէկ ազնուականների նահանգական ժողովը վճռեց՝ ուղարկել ներքին գործերի մինիստրին խորին շնորհակալութեան արտայայտութիւն Նորին Մեծութեանը կալուածների գրաւականով երկարատեւ պարաքեր տալու համար:

ՐԻԱԶԱՆ, 14 յունվարի: Ազնուականների նահանգական ժողովը վճռեց. Արտայայտել թագաւոր Կայսրին հաւատարիմ հպատակութեան զգացմունքներ:

ԿԱՅԻՐԷ, 14 յունվարի: Էգուց Սուդան ուղևորվող գօրգոն-փաշային յանձնված է, ինչպէս ասում են, միջոցներ գործադրել Սուդանը մաքրելու համար, որի հետ և խարտումը: Ենթադրված է Սուդանը գրեթէ անկախ պետութիւն դարձնել առևտրի ազատութեան և գերիների առևտուրը ոչնչացնելու պայմաններով:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 յունվարի: Իտալական նոր դեսպան կոմ Գրէպպի յանձնեց երէկ իր հաւատարմագրերը թագաւոր Կայսրին և ներկայացաւ թագուհուն: Պետրակօվսկի նահանգապետ գեներալ-լէյտենանտ Կօխանով նշանակված է Վիլնոյի, Կօվնօի և Գրոդնոյի նահանգների գեներալ-նահանգապետի օգնական քաղաքային բաժնի իրաւասութեամբ: Շուտով ֆինանսների մինիստրութեան առաջարկութեամբ կը կայանայ Ս. Պետերբուրգի մէջ կալուածական ակցիզներական բանկերի և անշարժ կալքերը փոխադարձ պատասխանատուութեամբ գրաւ ընդունող ընկերութիւնների ներկայացուցիչների առաջին ժողովը: Այդ ժողովի նիստերին կը մասնակցեն պետական գանձարանի բաժնի դերեկտոր Ցէրներ և կրեդիտային բաժնի առանձին կանցելարիայի դիրեկտոր Վերխովսկի: 1881 թուականին ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեանը յանձնած տէխնիկական ուսումնարանների զարգացման և առաջադիմութեան համար, մինիստրի խորհուրդի անդամ է նշանակված Ս. Պետերբուրգի տէխնօլոգիական ինստիտուտի պրոֆէսոր Վիշնեգրադսկի և նոյն նպատակով ենթադրված է մինիստրութեան գիտական մասնաժողովը լրացնել տէխնիկական և արհեստական կրթութեան մի քանի մասնագէտներով և հրաւիրել մասնաժողովի աշխատանքներին մասնակցելու համար արդիւնաբերական և առևտրական ներկայացուցիչներին, որոնք յայտնի են իրանց ծանօթութեամբ տէխնիկական արդիւնաբերութիւնների հետ: Փետրվարի կէսին կը գումարվի Ս. Պետերբուրգի մէջ մասնաժողովը, որ նշանակված է Ցուրկեստանի մէջ կատարված քննութեան առիթով: Լուրերի համեմատ այդ մասնաժողովի նախագահ նշանակված է կոմ Իգնատիեվ, իսկ անդամներ՝ գեներալ Չերնեաեվ, սենատոր Գիրս, Ֆերգանի նախկին նահանգապետ Աբրամով, գեներալ-մայորներ Պրօցէնկօ և Կուրօպատկին: Հանդուցեալ բանաստեղծ Ժուկօվսկու թղթերի մէջ գտնված են բացի „Օնէգինի, Անջէլօի և Բօրիս Գոդունովի“ բնագիրներից Պուշկինի դեռ ևս անյայտ շատ նամակներ:

ԲԵՐԼԻՆ, 15 յունվարի: Երէկ բազմաթիւ հասարակութեան ներկայութեամբ կայացաւ յայտնի պատգամաւոր Լասկերի Ամերիկայից բերված մարմնի թաղումը:

Հռոմ, 15 յունվարի: Դէպրէտիս յայտնեց պարլամենտի մեծամասնութեան ժողովին, որ շուտով կը ներկայացվի պարլամենտին երկրի պաշտպանութեան նախագիծը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 յունվարի: Այսօր կարմիր խաչի ընկերութեան դահլիճի մէջ գործնական բժիշկների ընկերութիւնը տօնում էր պրոֆէսոր Ե. Ի. Բոգդանովսկու վիրաբուժական գործունէութեան 25 ամեակը: Դահլիճը լիքն էր բժիշկներով և պատգամաւորներով բժշկական գիտական ընկերութիւններից: Նիստին նախագահում էր Բօակին:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍԱՊՕՆ

Գլիցերինի, նշէ, վարդի, կարբոլեան, լառուշի, բրնձի և այլն մեծ քանակութեամբ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ։ Նոյն տեղը օդեկոլօն և տուալէտի ուրիշ պատկանելիքներ 25% էժան քան թէ ուրիշ տեղ։

10—12

Յայտնի և տաղանդաւոր բանաստեղծ ՍԷՅԱՏԻ (կապիտան Գէորգ-բէգ Մատաթեանց) ընտիր բայց անտիպ մնացած բանաստեղծութիւնները փոշու տակից և կորստեան ճանապարհից ազատելու համար հատորներով հետզհետէ լոյս աշխարհ պիտի հանեմ։ Ամենայն ինչ պատրաստ շուտով մամուլի տակ կը մտնէ իմ սեպհական տպարանում արագատիպ մեքենայով։ Առայժմ կը տպվի երեք հատորիկը միասին, կանխիկ բաժանորդագրվողների համար մի րուբլի. տպագրվելուց յետոյ գինը կը բարձրանայ։

Ցանկացողները թող շուտով մեզ հասցնեն իրանց բաժանորդագինը հետևեալ հասցեով.

Въ Баку. Въ типографію Александра К. Касабова.

Ա. Ղասաբեանց։

16—20

ԴԷՐԲԵՆԴԻ հայոց ուսումնարանի համար պահանջվում են երկու ՎԱՐԺԱՊԵՏՆԵՐ, մէկը հայոց լեզուի համար, միւսը ռուսաց լեզուի համար։ Պայմանների մասին դիմել պ. Րաֆֆիին։

1—5

КЁЛЕРСКАЯ
ДУШИСТАЯ ВОДА.

50—50

ԵՐԿԱԹԻ ԳՆԻ ՊԱԿԱՍԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՈՎ 10% զիջումն է անվում ամեն տեսակ երկաթի մահճակալների համար, որոնք արդէն ծախվում են 25% էժան, քան որ և է տեղ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ։ Նոյն տեղը ստացված է մեծ քանակութեամբ ամենաառաջին տեսակ ֆու-չու-ֆու թէյ առաջին հունձի 2 րուբլ ֆունտը մաքուր թէյի, առանց թղթի։ Այդ թէյն ծախվում է ամեն տեղ 3-ից մինչև չորս րուբլի։ Շորերի առևտուրը վերջացնելու պատճառով, կանանց դոլմանները և այլ շորեր ծախվում են 20% զիջումով։

5—10

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

(ԿՈՒԿԻԱ, ՎՕՐՕՆՑՕՎԻ ԱՐՁԱՆԻ ՀԱՆԴԷՊ(

ՀԻՒԱՆԴՆԵՐԸ ԱՄԵՆ ՕՐ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ։

Ունի սենեակներ հիւանդների և ծննդականների համար, օրական 2-ից մինչև 4 մանէթ և ամսական 50-ից մինչև 100 մանէթ վարձով։ Երթևեկ հիւանդները վճարում են խորհրդի համար 50 կ.։ Հիւանդանոցի բոլոր բժիշկների համախորհրդի (կօնսիլիում) համար 3 մանէթ, չքաւորները անվճար։

Հիւանդները ամեն օր ընդունվում են.

Առաւօտեան՝ 9—12 ժամ, ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—վիրաբուժական, վեներական և ատամի ցաւերի համար։

Ն 10—10½ ժ. ԲՈՒԴԿՕՎՍԿԻ—մանկական, ներքին և կանանց ցաւերի։

10—11 ժ. (կիրակի, չորեքշաբթի և ուրբաթ) ՐԷՅԽ—աչքացաւի։

11½—12½ ժ. (երկուշաբթի), ԲԱԲԱՅԵԱՆ—ներքին և ջղային ցաւերի։

Երեկոյեան՝ 5½—6½ ժ.—ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—ամեն օր։

ԲԱԲԱՅԵԱՆ և ԲՈՒԴԿՕՎՍԿԻ—չորեքշաբթի և շաբաթ։

Համախորհուրդ (հիւանդանոցի բոլոր բժիշկների)—չորեքշաբթի և շաբաթ—6½—7½ ժամը երեկոյեան։

Հիւանդանոցի վերատեսուչ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ (բնակվում է նոյն հիւանդանոցում)։

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ

Այն պարոններին և գրավաճառանոցներին, որոնց կամ ուղարկված են վաճառելու „ԷՍ ԷԼ ԻՄ ՍԱԶԻ" օրինակները, շտապեն վաճառուածների փողերը և, եթէ չեն ցանկանում շարունակել վաճառումն, մնացած օրինակները ինձ հասցնել այս հասցեով. Чрезъ Просковею въ гор. Св. Креста. Учителю Сафаріанцъ.

ՀԻԱՆԱԼԻ ՑՈՒ-ՉՈՒ-ՑՈՒ-ԹԷՅ մինչև այս տարվայ վերջը ծախվում է 1 ր. 60 կ. ֆունտը ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ. Հարկաւոր չէ 2 ր. 20 կ. կամ 2 ր. 50 կ. վճարել ուրիշ տեղ վատ թէյի համար։ Նոյն տեղ էժան վաճառվում են արհեստական ծաղիկներ ապակէ ծածկոցներով, լամպաներ, գլխարկներ, զրապ, տրիկօ և ուրիշ շատ ապրանքներ ԿԻՍԱԳՆՈՎ։

9—10

Մ. Ն. ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ ՊԱՀԵՍՏ

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՄԱՆՐԱԾԱԽՍ

ԱՐՄԵԱՆՍԿԻ ԲԱԶԱՐ, ԿԱՏՕԼԻՔԵՍԿԱՅԱ ՓՈՂՈՑԻ ԱՆԿԻՒՆ, ՏՈՒՆ № 13

ՎԻԵՆՆԱՅԻ ԿԱՐԱՍԻՔ, զանազան աթոռներ 35 րուբլուց դիւժինը, բազկաթոռներ 6 ր., դիվաններ 12—25 ր., կաչելի, մանկական աթոռներ և այլն։ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵՒ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, ճանապարհի մահճակալներ, պահարաններ, ծալվող սամօվարներ։ Ջերմօզաններ 2 ր. 75 կ.—26 ր., սակվոյաժ ձեռքի և ուսից կախելու, ճանապարհի սումկաներ, ՃԱՆԱՊԱՐՀԻ ԱՐԿՂԵՐ 5 ր. 50 կ.—30 ր.։

Սամօվարներ, խոհանոցի պղնձէ ամաններ, կօֆէյնիկ, թէյամաններ, ութոներ և աղալու գործիք, գերմանական էմալով ամաններ, ԵՐԵՍ ԼՈՒԱՆԱԼՈՒ ՄԱՐՄԱՐԻՕՆԻ ամաններ 40 ր., երես լուանալու պղնձէ և ժեստի ամաններ։

ՊԱՏԻ ՀԱՅԵԼԻՆԵՐ 9 ր., տուալէտի հայելիներ 2 ր. 40 կ.—13 ր., զանազան մետալների մոմակալներ 1 ր.—15 ր., սեղանի դգալներ 4 ր. 50 կ. և թանգ, թէյի դգալներ ֆրաժէի, մէլխիօրի, լեհական և բրիտանական արծաթից աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ, դանակներ, պատառաքաղեր 2 ր.—26 ր.։

ՎԱՐՇԱՎԱՅԻ ԿՕՇԻԿՆԵՐ կանանց և մարդկերանց, հովանոցներ կանանց և մարդկերանց, ռուսական և անգլիական պողպատէ և երկաթէ դանակներ, յայտնի գործարաններից, 10,000 հատ անգլիական և գերմանական կողպէքներ 10 կ. և աւելի։

ՌԷՎՕԼՎԵՐՆԵՐ զանազան տեսակի 3 ր. 50 կ.—35 ր., պատրոններ րէվօլվերների համար, հրացան 6 ր. և աւելի, զանազան վէշալկաներ, կէխաքներ։ Անգլիական և ամերիկական կլէօնկա 50 կ.—2 ր. արշինը։

Մշտապէս ունեմ 10,000 ֆ. ԹԷՅ Պօպօվ եղբայրների, կաֆէ ՄԻԽԵԼՍՕՆԻ, թէյի համար խմորեղէն էյնեմի, ՐԷՅՆԳԱՐԴԻ սիգարներ, հոտաւէտ ջուր (Օդըկօլօն) ծխվող փոշիք, պուդրա, գլիցերինի սապօն և այլն, աւելի էժան քան թէ ուրիշ տեղ։

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ գալանտերէյի զանազան ԱՊՐԱՆՔՆԵՐ, ծխախոտի արկղ, դրամարկղ, քսակներ, սանդրներ, շապիկներ, լայկի ձեռնոցներ կանանց, զինուորական զամշի ձեռնոցներ, գարուս, թելեր, բրօնզի և մարմարիօնի թանաքամաններ, մոխրամաններ, գրիչներ, մատիտներ, գրչակոթեր, սուրգուչ, փոստի թուղթ, ծրարներ և այլն։

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ խցաններ (պրօբկա) հանքային ջրերի, գարեջրի, գինու և դեղատան ապրանքների համար, նոյնպէս և ուրիշ առարկաներ։

Վերև յիշված բոլոր առարկաները ունեմ մեծ քանակութեամբ և ստանում եմ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ և ՌՈՒՍԱՍՏԱՆԻ գործարաններից անմիջապէս։

Առևտրականներին զիջումն և առանձին պայմաններ։

Օտարաքաղաքացիք կարող են դիմել. Тифлисъ. М. Н. ТЕРЪ-НИКОГОСОВУ.

99—100

ВЪ КАНЦЕЛЯРІИ ВОЕННАГО ГУБЕРНАТОРА КАРССКОЙ ОБЛАСТИ

ОТКРЫТА ПОДПИСКА

НА ГАЗЕТУ

„КАРСЪ"

НА НАСТОЯЩІЙ 1884 ГОДЪ.

Газета „КАРСЪ" въ настоящемъ 1884 году будетъ издаваться совершенно на тѣхъ-же основаніяхъ, какъ и въ прошломъ году, по той-же программѣ и подъ тою-же редакціею.

УСЛОВІЯ ПОДПИСКИ: съ доставкою и пересылкою въ годъ *три рубля*, за четыре мѣсяца *одинъ рубль*. Подписка принимается *въ Канцеляріи Военнаго Губернатора*, куда адресуютъ свои требованія и иногородные.

Отъ редакціи. Газета „Карсъ" имѣетъ ближайшею цѣлью всестороннее изученіе новопріобрѣтенной Области и распространеніе въ обществѣ вѣрныхъ и точныхъ свѣдѣній, какъ о нынѣшнемъ ея состояніи, такъ и о мѣропріятіяхъ, направленныхъ къ ея развитію и благоустройству. Цѣль эта можетъ быть достигнута въ той мѣрѣ, въ какой лица, имѣющія по своему положенію возможность собирать свѣдѣнія по тѣмъ или другимъ вопросамъ, касающимся Области, ея населенія и расположенныхъ въ ея предѣлахъ частей войскъ, выразятъ свое сочувствіе газетѣ и пожелаютъ оказать ея редакціи просвѣщенное свое содѣйствіе сообщеніемъ имѣющихся въ ихъ рукахъ свѣдѣній и матеріаловъ; по тому мы просимъ этихъ лицъ не отказать намъ въ своемъ участіи и поспѣшить приведеніемъ въ порядокъ и сообщеніемъ редакціи находящихся у нихъ матеріаловъ; самая разработка этихъ матеріаловъ можетъ быть сдѣлана и въ редакціи, а потому литературные недостатки ихъ ни малѣйшимъ образомъ не должны стѣснять авторовъ ожидаемыхъ сообщеній.

2—3

Արդէն մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնի ԴՐ. Ա. ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑԻ դասախօսութիւնների երկրորդ տետրակը՝ ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ։ Բաժանորդներին իր ժամանակ կուղարկուի։ Ձր ստորագրողներին յիշեցնում ենք, որ բոլոր եօթ դասախօսութիւնների համար կանխիկ վճարն է 1 րուբլի 50 կոպէկ. իսկ Թիֆլիզից դուրս 1 ր. 65 կ։ Դիմել Թիֆլիզի գրավաճառանոցները և կամ հեղինակին հասցէով՝ Тифлисъ, Лабораторная улица, домъ Цуринова, № 5.—

ՍՏԱՄՈՔՍԱՅԻՆ ՑԱՒԵՐԸ

ՊԷՊՍԻՆԵԱՆ ԳԻՆԻ „ԲՈՒԴՕ"

Այդ գինին շատ զուրեկան համ ունի, 25 տարի շարունակ գործ է ածվում հետևեալ դիպվածներում. ԽԱՈՐԺԱԿԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹԵԱՆ, ՍՏԱՄՈՔՍԱՅԻՆ ՑԱՒԵՐԻ և առհասարակ ԱՆԿԱՆՕՆ ՄԱՐՍՈՂՈՒԹԵԱՆ ժամանակ։

Պէպսին „Բուդօ" ճանաչված է փարիզի բժշկական Ակադեմիայից և արժանացաւ առաջին մեդալների ՓԱՐԻԶԻ աշխարահանդիսում 1867 թ. ՎԻԷՆՆԱՅԻ 1873 թ. ՖԻԼԱԴԷԼՖԻԱՅԻ 1876 թ. և ՓԱՐԻԶԻ 1878 թ.։

Paris: Hottot—Boudault, 7, Avenue Victoria.

Գլխաւոր պահեստը ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ Բարձրագոյն հաստատված կովկասեան ընկերութեան դեղատան ապրանքների վաճառման։

Դէպօ Շահ-Պարոնեանցի, և Գրիմալդի այլ դեղատներում։

ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕՐ, 17 յունվարի, Թիֆլիսի ԿՐՈՒԺՕԿՈՒՄ

Պատիւ կունենայ տալ իր երրորդ կօնցերտը Վիօլօնչէլիստ, վիրտուօզ, սոլիստ Նորին Մեծութեան Բաւարիայի Թագաւորի

Ս. ԲԻՒՐԳԷՐ

Մասնակցութեամբ պ. պ. Կնինայի և Րատիլի։ Սկիզբը 8 ժամին երեկոյեան

1—1

Дозволено цензурою, Тифлисъ, 16 Января 1884 года. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час., Лорисъ-Меликовская ул., д. каз.